ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **էլ. հասցե՝** foi@foi.am, **www.foi.am**

13.08.2023
351-73

Արտաքին գործերի նախարար
Արարատ Միրզոյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2022 թվականի հունվարի 1-ից մինչ օրս «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման, ՀՀ տարածքով հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման կապակցությամբ որպես նույն օրենքով և ՀՀ կառավարության՝ 2010 թվականի հուլիսի 1-ի N 924-Ն որոշմամբ նախատեսված շահագրգիռ մարմին քանի՞ բացասական կարծիք է տրամադրել ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

2. Ի՞նչ միջազգային պարտավորությունների կատարման ապահովման նպատակին հակասության հիմքով է եղել Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանման, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման կամ ՀՀ տարածքով հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման վերաբերյալ ԱԳՆ բացասական կարծիքներից յուրաքանչյուրը:

3. Խնդրում ենք հայտնել ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններ սահմանող այն բոլոր միջազգային փաստաթղթերը, որոնք կարող են Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) արգելքի/ԱԳՆ բացասական եզրակացության հիմք հանդիսանալ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան